

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷՎՃԱՊՁԲ-2026/Հ-18 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
6	ՏԷՄԻԼ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ	ՏԷՄԻԼ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ	ՏԷՄԻԼ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ	«Լավագույն հրշեջ-փրկարար» մեդալը բաղկացած է երկու մասից՝ ցինկապատ պողպատե հնգանկյուն կախիչից և դրան կապողակով ամրացված սկավառակից: Կախիչը դարձերեսի կողմից ունի հատուկ ասեղային ամրակ՝ պարզևատրվածի հագուստին ամրանալու համար: Կախիչի չափսերն են՝ 39x27x39x24մմ (շեղումը +/-0,05մմ): Կախիչը պաստառապատված է 24 մմ (շեղումը +/-1մմ)լայնություն ունեցող կարմիր գույնի մետաքսյա ժապավենով: Ժապավենի եզրերն եզերված են 2 մմ (շեղումը +/-0,05մմ) լայնություն ունեցող մոխրագույն շերտագծով: Կախիչի ներսի կողմի եզրային հատվածից 4 մմ հեռավորության վրա՝ վերից վար ձգվում են 6 մմ (շեղումը +/-0,01մմ) լայնությամբ մեկական կապույտ գլավկներ: Սկավառակն արտադրվում է առնվազը 75%

				պղնձի պարունակությամբ համաձուլվածքից (մեդալի ընդունման ժամանակ ներկայացվում է պղնձի պարունակության վերաբերյալ փաստաթուղթ), փայլատ մակերես ստանալու տեխնոլոգիայով (էլեկտրոէռոզիոն մշակման մեթոդով ստացվող փայլուն մատային մակերես Ն2 սանդղակով), դրոշմման եղանակով, անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում 900-ից բարձր հարգի ոսկով՝ նվազագույնը 0,5 մկմ հաստությամբ: Տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 2.5մմ (շեղում՝ +/- 0.2մմ): «Լավագույն հրշեջ-փրկարար» մեդալն իրենից ներկայացնում է շրջանակ: Մեդալի մեջտեղում կրակի լեզվակն է, որից առաջ խաչվում են հրդեհաշիջման փողրակները, որոնք էլ իրենց հերթին ծածկված են հրշեջ-փրկարարի արծաթագույն սաղավարտով: Խաչվող փողրակների ներքևի ծայրը ծածկում է շրջանակի ներսից ելնող դափնեպսակի հիմքը, որից ներքև շրջանակի եզրագծով գրված են «ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐ», իսկ վերին եզրագծով՝ «ԼԱՎԱԳՈՒՅՆ» բառերը: Մեդալը երկու կողմից եզրագծված է 1մմ (շեղումը +/- 0,05մմ) լայնությամբ և 1 մմ (շեղումը +/- 0,05մմ) բարձրությամբ շրջանակով: «Լավագույն հրշեջ-փրկարար» մեդալի դարձերեսին՝ վերևում, եզրագծին զուգահեռ առկա է «ՀՀ ՆԳՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» հայերեն շրջանաձև գրությունը, իսկ ներքևում կորածև պատկերված են դեպի աջ և ձախ ձգվող երկու դափնու տերևներ: Դարձերեսի կենտրոնում տեղակայված է երկրագնդի խորհրդանիշը և ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ռելիեֆային տարբերանշանը: Երկրագնդի խորհրդանիշը
--	--	--	--	--

				ներկված է մուգ կապույտ էմալով: Դարձերեսին լազերային եղանակով դաջվում է հերթական համարը (սկսած՝ 0027-ից): Մատակարարը ապրանքը նախապես պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ, իսկ մատակարարելուց ապրանքի բեռնաթափումը իրականացնի իր բանվորներով: Կցված նկարը կրում է տեղեկատվական բնույթ: Կրծքանշանի բնութագիրը բխում է ՀՀ Փոխվարչապետի 2025թ. սեպտեմբերի 1-ի N 577-Ն որոշումից:
--	--	--	--	--

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷՍՃԱՊՁԲ-2026/Հ-18 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
6				